

«Պիտոյից գիրքը»¹ ընդօրինակություն է բյուզանդական դպրոցներում տարածված այն ճարտարանական դասագրքերի, որոնք շարադրում էին պատմական կամ դիցարանական (երբեմն էլ կյանքից վերցրած) թեմաները որոշակի եղանակով մշակելու կանոնները՝ այդ նյութը ոչ միայն ճառերի, այլև դանազան ժանրերի գեղարվեստական երկերի մաս դարձնելու նպատակով և պարունակում էին նաև յուրաքանչյուր տեսակի մշակման համար օրինակներ կամ նմուշներ։ Վարժությունների տեսակների թիվը տատանվում էր՝ 10—14։ «Պիտոյից գիրքը» բաղկացած է տասն գրքից, որոնցից յուրաքանչյուրը տեսական հրահանգներ և վարժությունների նմուշներ (3—7) է պարունակում որոշակի տեսակի համար։ Մենք չենք ընդունում Ա. Բաումգարտների այն ենթադրությունը, թե «Պիտոյից գիրքը» իր սկզբում ունեցել է ևս երկու գիրք, որոնք չեն պահպանվել², բայց կան նրա համար նախօրինակ հանդիսացող Աֆթոնիոսի նախակրթություններում (παιδεία, διδασκαλία)։ Չէ որ մեր հեղինակը բաց է թողել նաև Աֆթոնիոսի VI (αὐτοκρατορ) «ստեղծումն» և վերջին (παιδεία, διδασκαλία) գրքերը։ Սակայն համաձայն ենք Բաումգարտների մի այլ ենթադրության հետ։ Դա երկի վերնագրի հարցն է։ Ձեռագրերում հանդես եկող «Յաղագս պիտոյից» վերնագիրը թյուրիմացության արդյունք է. վերաբերելով միայն առաջին գրքին, այն սխալմամբ վերագրվել է ողջ երկին։ Ավանդված է նաև «Գիրք պիտոյից» վերնագիրը, իսկ գրականության մեջ հանդիպող և մեր կողմից կիրառվող «Պիտոյից գիրք»-ը զուտ պայմանականություն է։ Հետևելով Բաումգարտներին, մենք ընդունում ենք, որ երկը սկզբնապես կոչվել է «Նախակրթություն», որ հունարեն προπαιδεία բառի պատճենումն է։

Մինչև այժմ բանասիրությունը հստակ պատկերացում չունի «Պիտոյից գրքի» թարգմանական կամ ինքնուրույն բնույթի մասին։ Տարբեր կարծիքներ են հայտնվել նաև նրա գրության ժամանակի վերաբերյալ։ Առ այսօր անվիճելի է միայն, որ այն գրված է Սեբեոսից վաղ, քանի որ վերջինս քաղվածք ունի նրանից³։ V դարի երրորդ քառորդում այն տեղագրելու համար⁴ դեռևս փաստացի ապացույցներ չկան, սակայն մենք պայմանականորեն ընդունում ենք այդ հնարավորությունը։

«Պիտոյից գրքի» նախակրթությունների հնարավոր հունարեն նախօրինակների մասին առաջին անգամ խոսել է նրա հրատարակիչ Ջոհրապանը (էջ Ե—է)։ Իր առաջաբանում նա այդ առումով մատնանշել է Հերմոգենեսին, Թեոնին, Աֆթոնիոսին և Լիբանիոսին։ Ա. Բաումգարտների կարծիքով «Պիտոյից գրքի» աղբյուրներն էին Թեոնի և Աֆթոնիոսի նախակրթությունները և մի

¹ Սրբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի խորենացոյ նախակրթութիւնք հոռտորական ասացեալ Գիրք պիտոյից, աշխատասիրութեամբ Տն Հ. Յովհաննէս վղպի Զօհրապեան. Վենետիկ, 1796։ Մտել է նաև «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի խորենացոյ Մատենագրութիւնք» (Վենետիկ, 1843, Լրկորոգ տպագրութիւն՝ 1865) ժողովածուի մեջ՝ «Յաղագս պիտոյից» (էջ 341—581)։

² A. Baumgartner. Über das Buch „Die Chrie“, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft. Bd. XL, Leipzig, 1886, SS. 462—465.

³ Նույն տեղում, էջ 465—467։

⁴ С. Арешатян. Формирование философской науки в древней Армении (V—VI вв.). Ереван, 1973, с. 186.

երրորդ աղբյուր, որից օգտվել էր նաև Նիկողայոս Մյունացին իր նախակրթությունները գրելիս⁵:

Դիտարկելով անտիկ գրականության մեջ ճարտասանական արվեստի տեսության զարգացման ուղիները և մասնավորապես «նախակրթությունը» (նախնական վարժություններ) ժանրի պատմությունը, մենք ստանում ենք հետևյալ պատկերը:

Դպրոցական վարժությունների բնույթ կրող ճառերի օրինակներ գրում էին արդեն ճարտասանության առաջին տեսաբանները, Գերգիասից (մ. թ. ա. V դար) սկսած: Սակայն նախաթեոնյան նախակրթությունների մասին սոսկ առանձին հակիրճ տեղեկություններ են պահպանվել: Միայն մ. թ. I դարի վերջում Ալեքսանդրացի էլիոս Թեոնը ամփոփեց դրանք մի բավական ընդարձակ տրակտատի մեջ⁶: Սակայն նրանց սիստեմավորումը, թվի և կարգի կանոնացումը, սեռական հրահանգների և վարժությունների (դուտ նախակրթությունների)⁷ բաժանումը պատկանում է II—IV դդ. ճարտասանության առաջին ուղղությանը, որ ստացել է «երկրորդ սոփեստականություն» անվանումը⁸, և որը վերականգնելով դասական աստիկյան գաղափարական և ոճական նորմերը՝ տվել է բազմաթիվ տաղանդավոր ու երևելի հռետորներ: Երկրորդ սոփեստականության տեսաբանն է եղել Հերմոգենես Տարսոնացին, որին, բացի տեսական աշխատություններից, պատկանում է նաև այս կամ այն տիպի ճառ գրելու համառոտ հրահանգներ (առանց օրինակների) պարունակող մի յուրահատուկ դպրոցական ձեռնարկ՝ *πρωτογραμματα* վերնագրով⁹: Դրանց հիման վրա է կազմվել առաջին մեզ հասած նախակրթությունների ժողովածուն, որի հեղինակն էր IV դարի խոշոր ճարտասան և պեսական գործիչ Լիբանիոս Անտիոքցին¹⁰: Հերմոգենեսի հրահանգները մշակել և դպրոցի կարիքներին ավելի է հարմարեցրել Լիբանիոսի աշակերտ Աֆթոնիոսը, յուրաքանչյուր տեսակին կցելով ճառերի բազմաթիվ օրինակներ¹¹: Աֆթոնիոսի գործը դարձել է բյուզանդական դպրոցում ամենատարածված դասագիրքը՝ դուրս մղելով Հերմոգենեսին և Թեոնին: Այն արտադրում էին, օժտում ծանոթագրություններով, համառոտում, օգտագործվել է Արևմտյան Եվրոպայի դպրոցներում և համալսարաններում ընդհուպ մինչև XVI—XVII դդ.: Այդպիսի համառոտված տեսքով էլ այդ գործը մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ յուրաքանչյուր տեսակի համար մեկ ճառի օրինակով: Իսկ համառոտ ժողովածուի մեջ ըմտած նախակրթությունները պահպանվել են որպես առան-

⁵ A. Baumgartner. Op. cit., S. 461—462.

⁶ Ch. Walz. *Rhetores Graeci* (in 9 tomo). T. I, Stuttgart, 1832, SS. 145—256. L. Spengel. *Rhetores Graeci* (in 3 tomo). T. II, Lipsiae 1854, SS. 59—130. Նրա մասին տե՛ս Stegemann. Aelius Theon.—Paulys Realencyclopädie der Klassischen Altertumswissenschaft (RE), Bd. VA₂ (1934), SS. 2037—2054.

⁷ Սակայն *πρωτογραμματα* բառին այդպես էլ չվիճակվեց տերմինաբանական ճշգրտություն չեռք բերել. այդպես շարունակում էին կոչվել և՛ Հերմոգենեսի հրահանգները, և՛ Լիբանիոսի վարժությունները, և՛ Աֆթոնիոսի հրահանգներ ու վարժություններ պարունակող ժողովածուներ:

⁸ N. Eisenhut. *Einführung in die antike Rhetorik und ihre Geschichte*. Darmstadt, 1974; C. S. Baldwin. *Medieval Rhetoric and Poetic*. NY, 1928; A. Lesky. *Geschichte der griechischen Literatur*. Bern—München, 1963.

⁹ Ch. Walz. Op. cit., SS. 1—54; Spengel. Op. cit., SS. 1—27; H. Rabe. *Rhetores Graeci*. T. VI (1913, ed. Rabe); Նրա մասին տե՛ս Radermacher. *Hermogenes von Tarsos*.—RE, Bd. VIII₁ (1912), SS. 865—877.

¹⁰ Libanii opera, ed. Förster. Bd. VIII (Progymnasmata), Lipsiae. 1913.

¹¹ Ch. Walz. Op. cit., SS. 59—120=Rabe. Op. cit., t. X (1926); Spengel. Op. cit., SS. 28. Նրա մասին տե՛ս Brzowska. *Aphthonios*.—RE, Bd. I, (1894), SS. 2797—2800.

ձին ժողովածու՝ վերագրված V դարի ճարտասանության ուսուցիչ, նախակրթությունների տեսության հեղինակ Նիկողայոս Մյուռացուն¹²։

Այսպիսով, V դարում գոյություն ունեւ Աֆթոնիոսի ընդարձակ ժողովածուն, որի մեջ կարող էին մտնել նաև նրա ուսուցիչ Լիբանիոսի նախակրթություններից մի քանիսը։ Այդ ժողովածուն էլ հանդիսացել է «Պիտոյից գրքի» նախորինակը (միայն թե Աֆթոնիոսի 14 գրքերից «Պիտոյից գրքում» առկա է 10-ը)։

«Պիտոյից գրքի» «սահմանները» Աֆթոնիոսի տեսական հրահանգների թարգմանությունն են¹³։ Թարգմանությունը հիմնականում բառացի է, նյութական, բայց կան նաև նկարագրական թարգմանության հատվածներ, հունարեն բնագրի հետ անհամապատասխանություններ, սակայն այդ հարցը, առանձին ուսումնասիրության նյութ լինելով, այստեղ չի քննարկվում։

Ինչ վերաբերում է նախակրթություններին, ապա հեղինակը, ձեռքի տակ ունենալով Աֆթոնիոսի ժողովածուն, իր նախակրթությունների մի մասը գրել է ընդօրինակաբար, մի մասն էլ ինքնուրույն է հորինել։

Սույն հոդվածը նվիրված է «Պիտոյից գրքի» նախակրթությունների ընդհանուր բնութագրմանը և ընդօրինակաբար գրված նախակրթությունների համեմատությանը իրենց հունարեն նախորինակների հետ։

«Գիրք Պիտոյից»-ը պարունակում է ընդամենը 57 նախակրթություն, որոնցից երեքը՝ «յաւելուած օրինակաց բարաոնութեան», անկասկած ուշ ներմուծություն են։

Նախակրթություններից քսանվեցը նախորինակներ ունեն Աֆթոնիոսի և Լիբանիոսի ժողովածուներում։ տասնվեցը՝ Աֆթոնիոսի մոտ (որոնցից միայն մեկն է պահպանվել Աֆթոնիոսի համառոտ ժողովածուում), հինգը՝ Լիբանիոսի մոտ¹⁴ և հինգը՝ «Յաղագս պիտոյից» (օր. ա), «Յաղագս խրատու» (օր. ա), «Սահման հասարակ տեղույ» (օր. գ), «Յաղագս պարսաւի» (օր. դ), «Սահման գրութեան» (օր. ա) (վերջինս առկա է Աֆթոնիոսի գրքում) երկուսի մոտ էլ, սակայն նրանք ավելի շատ ընդհանուր կետեր ունեն Աֆթոնիոսի համապատասխան նախակրթությունների հետ, ուստի վերջիններս պետք է համարել նրանց նախորինակը։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ բացի վերոհիշյալ հինգից, Նիկողայոսի (իմա Աֆթոնիոսի) ժողովածուում կան Լիբանիոսի մի շարք նախակրթությունների հետ վերնագրերով համընկնող և միևնույն թեման արժարժող նախակրթություններ։ Այստեղ դիտելի է միջնադարի համար մի սովորական երևույթ, որը առանձնապես բնական է թվում դպրոցական վարժության համար, երբ աշակերտը մրցում է իր ուսուցչի հետ, ջանալով տարբերվել նրանից ինքնուրույն մտքերով, իր խոսքերով մշակել նրա մոտ առկա թեմաները, սակայն անխուսափելիորեն փոխ է առնում առանձին մտքեր ու արտահայտություններ։ Աֆթոնիոսի նախակրթություններն ավելի համառոտ են, քան Լիբանիոսինը և ավելի են համապատասխանում տեսական հրահանգներին, որ զարմանալի չէ, քանի որ ինքն է եղել վերջիններիս հեղինակը։ Սակայն նրան չի հաջողվում գերազանցել իր ուսուցչի տրամաբանության խաղի նրբությունն ու հնարամտությունը, ինչպես նաև նրա փայլուն լեզուն ու ոճը։

Այսպիսով, Աֆթոնիոսը մրցում էր Լիբանիոսի հետ, իսկ «Պիտոյից գրքի» հեղինակը՝ Աֆթոնիոսի հետ՝ քսանմեկ նախակրթությունների դեպքում (16+5)։ Մնացած հինգ նախակրթությունները, որոնց համապատասխաններն ենք գտնում միայն Լիբանիոսի մոտ, շատ ավելի հեռու են իրենց հունարենից

¹² Ch. Walz. Op. cit., SS. 262—420; H. Rabe. Op. cit., t. XI (1913), ed. Felten. Նրա մասին տե՛ս W. Stegemann. Nicolaos von Myra.—RE, Bd. XII₁ (1936), SS. 424—457.

¹³ Աֆթոնիոսի մոտ և «Պիտոյից գրքում» գրքերի տարբեր քանակի հնարավոր պատճառների մասին տե՛ս A. Baumgartner. Op. cit., SS. 462—467.

¹⁴ Աֆթոնիոսի ժողովածուի մեջ Լիբանիոսի նախակրթությունների գոյության մասին խոսելիս ի նկատի ունենք հենց այս հինգ նախակրթությունները։

նախօրինակներից, քան այն նախակրթությունները որոնց նախօրինակներն առկա են Աֆթոնիոսի մոտ: Առկա հունարեն նախօրինակի և հայերեն բնագրի աղբյուրի տարբերությունը հուշում է մեզ նրանց միջև միջանկյալ օղակի գոյություն, այսինքն՝ Աֆթոնիոսի մոտ համապատասխան չպահպանված նախակրթությունների գոյության հնարավորության մասին ենթադրությունը. մանավանդ որ այդ տարբերությունը նույնքան է, ինչքան վերոհիշյալ հինդ նախակրթությունների դեպքում, որոնց համար գերադասեցինք նախօրինակ ընդունել Աֆթոնիոսի նախակրթությունները¹⁵:

Ինչ վերաբերում է նախակրթություններին ընդհանրապես, ապա նկատել ենք հետևյալ օրինաչափությունը: Այն նախակրթությունները, որոնցում հիշատակվում են անտիկ հեղինակներ, անտիկ պատմության կամ դիցաբանության դավազներ, սովորաբար հունարեն նախօրինակ ունեն, որից էլ քաղվում է նրանց մասին տեղեկությունների մեծ մասը: Այդ խմբի մեջ մտնում են առաջին երեք գրքերի («պեոք», «խրատ», «եղծումն») բոլոր նախակրթությունները, որոնք թվով տասնվեց են, և շնայած նրանցից հինգը պահպանված նախօրինակներ չունեն, սակայն ելնելով բովանդակությունից պետք է ընդունել դրանց գոյությունը սկզբնական ժողովածուում: Նրանցից մեկը «Յաղագս պիտուիզ» գրքում է (օր. գ), երեքը՝ «Յաղագս խրատու» գրքում (օր. դ, ե, է) և մեկը՝ «Յաղագս եղծման» գրքում (օր. գ)՝ «Եղծ զԵրակելայ»: Այս շարքին կրցելով նաև չորրորդ՝ «Սահման հասարակ տեղույ» գրքի առաջին երեք՝ նախօրինակ ունեցող նախակրթությունները, կարող ենք պնդել, որ «Պիտուիզ գրքի» առաջին սասնիներ նախակրթությունները հունարեն նախօրինակ ունենին:

Մնացած գրքերն ունեն ընդամենը 12 փոխառյալ թեմայով (նախօրինակ ունեցող) նախակրթություն. հինգերորդը՝ «Սահման ներբողինի» և վեցերորդը՝ «Յաղագս պարսալի»՝ երկուական, յոթերորդը՝ «Սահման բաղդատութեան» և ութերորդը՝ «Սահման բարառութեան»՝ մեկական, իններորդը՝ «Սահման արտասանութեան» և տասներորդը՝ «Սահման դոութեան»՝ երեքական: Ընդ որում վեցին գրքի նախակրթությունները սպառվում են այդ երեքուկ և ինընտրույն թեմաներով նախակրթությունների բացակայությունը բացատրվում է սեռի տեսակի համեմատական բարդություններով:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գրքերում նախակրթությունների կազմը համապատասխանում է տեսական հրահանգներում առաջադրված այն առարկաների ցանկին, որոնք ենթակա են գովասանքի, պարսավանքի և բաղդատություն՝ «դէմք, իո, ժամանակ, տեղի, անբան կենդանի, տունկ» (չկա միայն «տեղույ» «ներբողեան»-ը և «ժամանակ»-ի «պարսալ»-ը): Ընդգծենք, որ այստեղ հեղինակն առաջին անգամ իշ նյութը քաղում է Աստվածաշնչից (Հին կտակարանից), ըստ որում երեք գրքերում էլ միևնույն, այն է՝ «դէմք»-ին վերաբերող նախակրթություններում՝ «ներբողեան Մովսէսի (օր. ա), «Պարսալ»՝ «Պարսալ ձիոյ» (կենդանի, օր. բ) թեմայի գաղափարը նշմարված է «Սահման ներբողինի» հրահանգում (ծին՝ որպես գովասանքի առարկա), «Պարսալ լերին» (տեղի՝ օր. գ) թեմայի ակունքները դառնում են շերմողենեսի ներբողյանի սահմանման մեջ: Հնարավոր է, Աֆթոնիոսի ժողովածուում տեղ էին գտել այդ առարկաների ներբողյանը կամ պարսավոր: (Նախակրթություններում միևնույն թեման հակառակ նշանով արժարժելու հնարավորության մասին տե՛ս ստորև): «Բաղդատութիւն գարնայնոյ և ամարայնոյ» (ժամանակ, օր. գ) նշմարված է արդեն «ներբողեան գարնայնոյ» նախակրթության «բաղդատութիւն» գլխում: Կան նաև «ներբողեան պատեղաղմի» (իո, օր. դ), «ներբողեան աղանոյ» (կենդանի, օր. ե), «Բաղդատութիւն մշակութեան և զինուորութեան» (իոք, օր. բ), «Բաղդատութիւն ձիոյ և արջառոյ» (կենդանի, օր. լ) աննախատիպ նախակրթությունները: Վերջիններիս համար սկզբունքորեն հնարավոր է ենթադրել հունարեն նախօրինակների գոյությունը, ի տարբերություն այնպիսի աստվածաշնչական թեմաներով գրված նախակրթությունների, որոնք,

¹⁵ Այդ գեղարվեստ վերանում է կիբանիոսի այդ նախակրթությունների՝ Աֆթոնիոսի ժողովածուի մեջ մտած չլինելու մասին ենթադրության անհրաժեշտությունը:

անկասկած, ինքնուրույն են: Նույնը կարող ենք ասել «Սահման հասարակ տեղւոյ» գրքի «Յաղագս հուղկահարի» (օր. դ) նախակրթության համար: Իսկ վերջին՝ «Յաղագս գերեզմանակրկտի» (օր. ե) նախակրթության զաղափարը, մեր կարծիքով, ծագում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի հետևյալ դրվագից. թվարկելով մարդկանց շար արարքները Եզնիկը գրում է. «Եւ այլք յգերեզմանս կրկտեն և զքաղեալ մարմինն ընդ հողով մերկացեալ խաչտառակեալ՝ արևու ցուցանեն և զմեծառեալ գին, առ փութի շծածկելոյ, թերևս և շանց ևս կերակուտ արկանեն»¹⁶: Հմմտ. վերոհիշյալ նախակրթության հետևյալ հատվածները. «մերկ ի բաց ընկեցիկ արսաքս զայնորիկ մեռելոյ ընկենոյր մարմինս» (էջ 187), «ի մէջ առէք զընկեցիկն արարեալ մարմինս անգամ անգամ լեալ զէշ և կերակուր ոչ միայն գազանաց երկրի և սողնոց, այլև թռչնոց երկնից» (էջ 141):

Բացի այս օրինակից մեզ հաջողվել է հայտնաբերել նաև այլ տեղեր, որոնցում «Պիտոյից գրքի» հեղինակն օգտվել է հայկական աղբյուրներից (թարգմանական): Սակայն այդ նյութը դեռևս համալրվելու է, իսկ սույն հոդվածում մենք միայն առանձին օրինակներ ենք բերելու:

Ութերորդ և իններորդ գրքերի բոլոր ինքնուրույն նախակրթությունները գրված են Աստվածաշնչի թեմաներով:

Այսպիսով, եթե անտեսենք տասներորդ գիրքը, կատանանք նախակրթությունների՝ ըստ գրքերի բաշխման հետևյալ պատկերը. ձեռնարկի սկիզբը՝ նրա մեկ երրորդը, առանց բացառության բաղկացած է փոխառյալ թեմաներով նախակրթություններից, այնուհետև հայտնվում են հեղինակի կողմից ինքնուրույնաբար, մեծ մասամբ Աստվածաշնչից, ընտրված թեմաներով նախակրթություններ, իսկ գրքի վերջում այգափսիները գերակշռում են: Հեղինակը, հմտությամբ ձեռք բերելով փոխառյալ սյուժեների մշակման գործում, սկսում է ներգրավել իրեն ավելի հարագատ, բայց այդ ժանրի հունական գրականության համար ոչ հատկանշական թեմաներ, աստիճանաբար ավելացնելով դրանց թիվը, սակայն, հնարավոր է, մինչև վերջ չհրաժարվելով իրեն վարժություն ծառայող փոխառյալ թեմաներից:

«Պիտոյից գրքի» նախակրթություններն ընդհանուր առմամբ բնութագրվում են հետո անցնեն հունարեն նախօրինակներ ունեցող նախակրթությունների՝ վերջիններիս հետ առնչության, մասնավորապես՝ տարբերությունների բացահայտմանը, ջանալով բացի մասնավոր գիտարկումներից նկատել նաև որոշ օրինաչափություններ, որոնցից այժմ մեզ ակնհայտ են թվում հետևյալները.

1. Բնագիրը երբեք չի համընկնում նախօրինակի հետ. թարգմանական հատվածներ չկան:

2. «Պիտոյից գրքի» հեղինակը խստիվ հետևում է իր «սահմանում»-ների վերջում բերվող սովորյալ տիպի նախակրթությունը որոշակի գլուխների կամ կետերի բաժանելու պահանջին, որը սովորաբար ձևակերպվում է «իսկ գործեսցես զնա գլխօք այսպիսեօք» բանաձևով և ապա թվարկվում են գլուխները: Նույնիսկ ձեռագրերում տեքստը միշտ գլուխների է բաժանված (ա, բ, գ...): Աֆթոնիոսը պահանջվող բաժանմանը այդքան խստորեն հետևում է միայն չիլի (պէտք) և չոպչո (խրատ) գրքերում, իսկ մնացած գրքերում նա բոլոր գլուխները չէ, որ մշակում է: Տեքստի բաժանումը գլուխների է՝ ավելի դրժվար է գիտել լիբանիոսի մոտ, մասնավորապես, որ նա գրում էր Հերմոգենեսի հրահանգների հիման վրա, իսկ վերջիններս չեն համընկնում Աֆթոնիոսի հրահանգներին:

¹⁶ Եզնիկայ Կողբացոյ Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826, էջ 19: Ընդգծված հատվածը թարգմանությունն է Մեթոդիոս Օլիմպիացուց. καὶ τὸ κρυφθὲν ἦτο σωμα τῆ γῆ πάλιν ἐθείζοντο. Ն. Banaſeanu. La traduction arménienne des tours participiaux grecs. Bucarest, 1937, p. 22.

Փաստորեն միայն «պէտք» և «խրատ» գրքերի նախակրթություններն են, որ կարող ենք կետ առ կետ համեմատել Աֆթոնիոսի¹⁷ համապատասխան նախակրթությունների հետ, մնացած գրքերում նման, փոխառյալ մտքերը ստիպված ենք փնտրել ամբողջ տեքստով մեկ:

3. «Յաղագս պիտոյից» և «Յաղագս խրատու» առաջին՝ «ասողին գովութիւն» գլուխը միշտ ավելի ծավալուն է, քան Աֆթոնիոսի մոտ, սակայն հավելումը որպէս կանոն արված է ոչ թե գովության առժանացած անձի վերաբերյալ, այլ հարակից տեղեկությունների հաշվին:

Եթե Աֆթոնիոսի մոտ գովասանքը սովորաբար համառոտ է և վերաբերում է կոնկրետ «պէսք»-ի կամ «խրատ»-ի հեղինակին, ապա «Պիտոյից գրքում» նրան հաճախ նախորդում է այն բնագավառի ընդհանուր գովասանքը, որի ներկայացուցիչն է տվյալ անձնավորությունը. օրինակ՝ Դիոգենեսից առաջ գովաբանվում է փիլիսոփայությունն ընդհանրապես («պէտք», օր. ա), Դեմոսթենեսից առաջ՝ Աթենքը, որպէս «բազմագոյն ճարտասանաց երջանիկ պարու» հայրենիք («խրատ», օր. ա), Սոկրատեսից («պէտք», օր. գ) և Բիասից («խրատ», օր. գ) առաջ՝ «զիմաստակաց հոյս», պլուրազորական Թեանոյից առաջ՝ Պլուրազորասը («պէտք», օր. ե), Հոմերոսից առաջ՝ քերթողական արվեստը («խրատ», օր. դ), Մենանդրոսից առաջ՝ «զղասս կատակերգական» («խրատ», օր. գ), Եվրիպիդեսից առաջ՝ քերթողները «և մանաւանդ... զողբեցականց դաս» («խրատ», օր. գ):

Դրա փոխարեն հայերենում անձին վերաբերող տեղեկությունները մեծ մասամբ ավելի սակավաթիվ են. օրինակ՝ Աֆթոնիոսը գովում է Դիոգենեսին այն բանի համար, որ նա փիլիսոփայությունն ուղղել է դեպի բարքերի կատարելագործումը, ի տարբերություն մնացած փիլիսոփաների, որոնց հետաքրքրում էր արեւի և մյուս լուսատուների շարժումը, իսկ հայերեն բնագրում այդպիսի հակադրություն չկա («պէտք», օր. ա). չկան նաև հետևյալ տեղեկությունները՝ որ լակեդեմոնացիները սեռում են Հերակլեսից («պէտք», օր. դ), որ ճարտասանական արվեստը «խոսքի ուժգնության» համար պարտական է Դեմոսթենեսին («խրատ», օր. ա), որ Հեսիոդոսը ճշմարիտ կարծիք է հայտնել Մուսաների մասին («խրատ», օր. բ), որ Եվրիպիդեսը պատմում էր մարդկանց դժբախտությունների մասին ոչ թե ճակատագիրը ամբաստանելու, այլ հանդիսատեսներին զգուշացնելու համար («խրատ», օր. գ) և որ Կանդաուլեսը Հերակլեսի սերունդն է («եղծումն», օր. բ):

Սակայն կան և հակառակ երևույթի առանձին օրինակներ. Թեանոյին նրվիրված «պէտք»-ում (օր. ե) առկա է ոչ միայն Աֆթոնիոսից ծագող միայն այն մասին, որ Պլուրազորասն առաջինն էր, որ «վարդապետություն էր մատակարարում» նաև կանանց, այլև ինքնուրույն տեղեկությունը նրա նդիպատու ուղևորվելու մասին, ուր նա զբաղվել էր «բանական կրթությամբ» այնքան, որ կարող էր իր գիտելիքները թարգմանել հունարենի Պլուրազորասին վերաբերող այս տեղեկությունները շատ տարածված էին և դժվար էր ասել, թե ինչ աղբյուրից էր քաղել դրանք մեր հեղինակը: Աֆթոնիոսից չէ նաև այն միտքը, որ Հեսիոդոսը գերազանցել է բոլոր «քերթող»-ներին, նույնիսկ Հոմերոսին:

«Յաղագս խրատու» գրքի երրորդ նախակրթության վերնագիրը Թևոզիդեսի մի երկտողի թարգմանությունն է, սակայն իրականում ներդրվում է Բիաս իմաստակը: Այս սխալին ուշադրություն է դարձրել Բաումգարտները՝ փորձելով այն բացատրել¹⁸:

4. Ամենահետաքրքրական նորույթը, որ առկա է «Յաղագս պիտոյից» և «Յաղագս խրատու» գրքերի նախակրթություններում, «յարացոյց» (παράδειγμα) և «վկայութիւն հնոցն» (παρρηγοία παλαιών) գլուխների աստիճանաշնչական

¹⁷ Խոսելով նախօրինակների բնագրերի մասին ընդհանրապես, սահմանափակվելու ենք Աֆթոնիոսի անունով, քանի որ համարում ենք, որ Լիբանիոսի նախակրթությունները իրականում նախօրինակ չլին ծառայել «Պիտոյից գրքի» հեղինակին: Սակայն ներգրավվելու ենք դրանք որպէս չպահպանված նախօրինակի պահպանված նախօրինակ:

¹⁸ Տե՛ս A. Baumgartner. Op. cit., S. 475.

թեմաներն են: Կարծես քրիստոնյա հեղինակին հաճույք է պատճառում մեր-ցության մեջ մտնելն իր հեթանոսական սկզբնաղբյուրի հետ, Աստվածաշնչում օրինակներ և իմաստունների ասացվածքներ գտնելով արուսթյան («պէտք», օր. դ), իր սաների արարքների համար ուսուցչի և ղեկավարի պատասխանատու-թյան («պէտք», օր. ա), ամուսնության սրբության (օր. ե), ընչեղության օգ-տակարության («խրատ», օր. ա), ուժեղներին հակառակելու անմտության («խրատ», օր. բ), աղքատությունից խուսափելու անհրաժեշտության («խրատ», օր. ե, գ), իմաստուն խորհրդի կարևորության («խրատ», օր. դ), բազմաթիվ բարեկամներ ունեցող մարդու «բարեբախտության» («պէտք», օր. բ) մասին. իսկ Աֆթոնիոսի մոտ համապատասխան տեղերում օրինակներ են բերվում Աթենքի («պէտք», օր. ե, «խրատ», օր. ա, գ), Սպարտայի («պէտք», օր. դ) դասական պատմությունից, Իլիականից («խրատ», օր. բ), Ոդիսականից («խրատ», օր. գ), Լիբանիոսը հիշատակում է Հերակլեսի ու Թեղեսի և այլ դա-սական հերոսների բարեկամությունը («պէտք», օր. բ), իսկ որպես հին իմաս-տուններ հանդես են գալիս Ալկայոսը («պէտք», օր. դ), Սոֆոկլեսը («պէտք», օր. ա, ե, «խրատ», օր. բ), Պինդարոսը («պէտք», օր. ա), Եվրիպիդեսը («պէտք», օր. բ, «խրատ», օր. գ) և Հոմերոսը («խրատ», օր. գ):

5. Հայերեն նախակրթությունների հեղինակը ձգտում է խուսափել ան-տիկ կյանքի իրականությունից: Թեանոյի մասին «պէտք»-ում բացակայում են այն պարադոքսները, որոնցում «ոմն» նրան հարց է տալիս: Աֆթոնիոսի մոտ այդ հարցը տալիս է գաղտնածիսությանը մասնակցել ցանկացող մի կին՝ աստվածներին զայրացնելու վախից, բայց Թեանոն նրան մոտեցնում է մեհ-յանին, քանի որ նա հավատարիմ ամուսին էր, իսկ անօրեն հաճույքները գե-րադասող մի այլ կնոջ հեռացնում է սրբավայրից: Նույն նախակրթության παραβολή «առակ» գլխում Աֆթոնիոսը դատողություններ է անում այն մասին, որ անօրեն հաճույքների նկատմամբ հիվանդագին հակում ունեցող մարդիկ հեռացվում են աստվածների պաշտամունքի ծեսերից ճիշտ այնպես, ինչպես զոհաբերությունների ժամանակ զոհերից անջատվում են հիվանդ անդամները. հայերեն բնագրում այս գլխում բերվում է տատրականների օրինակը, որոնք ա-մուսնական հավատարմության համար արժանացել են տերունական ողջա-կիլման պատվին:

Ալեքսանդր Մակեդոնացուն նվիրված «պէտք»-ում (օր. բ) ոչ մի արձա-գանք չեն ստացել Լիբանիոսի դատողություններն այն մասին, որ քաղաքնե-րից մի քանիսը ունեն դեմոկրատիկ կարգեր, մյուսները գտնվում են թագա-վորի իշխանության տակ, քաղաքների մի մասում էլ իշխում է օլիգարխիան:

Սակայն կան առանձին դեպքեր, երբ հայերեն բնագրում իր նախորինակ-ներից անկախ հայտնվում են անտիկ կյանքին հատուկ իրողություններ: «Յի-մար է, որ ընդ վեհս քան զինքն հակառակէ» «խրատ»-ում (օր. բ) «առակ» գլխում Աֆթոնիոսի ծեծված օրինակի փոխարեն (նավավարի մասին, որ զոհ-վում է, պայքարելով ուժեղ հողմերի դեմ) մեր հեղինակը կոչ է անում հիշել ուժեղներին չհակառակելու սկզբունքը ըմբիշների և հաբտասանների մրցույթ-ների ժամանակ: «Թէ նաւելի՞ է» «դրութեան» մեջ (օր. գ) նավարկությունը ոչ միայն հնարավորություն է առաջին վաճառականներին հարստանալու և «տես-լասէր» մարդկանց՝ նոր քաղաքներ, լեռներ և դաշտեր տեսնելու, այլև ըմբիշ-ներին, ողբերգականներին և իմաստասերներին՝ մասնակցելու «օտարաշխարհայ» մրցույթներին:

6. Հեթանոսական աստվածների փոխարեն «Պիտոյից գրքում» միշտ հի-շատակվում է աստված. ամուսնությունը աստվածների (հմպ՝ աստծու) ըն-ծան է («պէտք», օր. ե), ձիթենու ծնողն է Աթենասը (հմպ՝ ամեն ինչի սկիզբն է հաստատություն) («ներբողեան», օր. գ), նավարկությունը նը-պաստում է արդարությանը, քանի որ մարդիկ, վախենալով ծովում իրենց սպասող վտանգներից, օգնություն են հայցում աստվածներից (ասածուց) («դրութիւն», օր. գ), մատնիչին չհաջողվեց կորստի մատնել քաղաքը, քանի որ աստվածների ողորմածությունը (աստվածային նախախնամությունը) թույլ-չտվեց («հասարակ տեղի», օր. գ):

Եթե «Սահման ներբողիկն» գրքի նախակրթություններում աստվածն է ներբողվող առարկաների նախածնողը կամ պատճառը, ապա «Յաղագս պարսալի» գրքում իրողությունն այլ է: Աֆթոնիոսի մոտ որթը հայտնաբերել է Դիոնիսոսը, իսկ նավարկությունը՝ Պոսեյդոնը: Հայերեն բնագրում նրանց հեղինակներն են «Հարառն և մոլեկան» մարդիկ, որոնք արժանի էլ չեն հիշատակի:

7. Երբեմն (ընդամենը չորս անգամ) նախօրինակում աստվածների հիշատակությունը հայերեն տեքստում իր համապատասխանը չունի: Աստվածն ավելի հաճախ է հիշատակվում բարոյախոսական բնույթ ունեցող հատվածներում, այն դեպքում, երբ նախօրինակների համապատասխան տեղում աստվածների ոչ մի հիշատակություն չկա:

Եթե 1—4 կետերը վերաբերում էին առաջին երկու գրքերին, իսկ 5—7-ը նախօրինակ ունեցող նախակրթություններին ընդհանրապես, ապա երրորդ գրքից սկսած բաղդատությունը կարվի ըստ առանձին նախակրթությունների:

1. Հստ առասպելի նիորեն Տանտալոսի դուստրն էր, նա էլ իր հերթին սերում էր Զևսից, այսպիսին է իրողությունը և Աֆթոնիոսի մոտ: Իսկ «Եղծ զՆեոփրայ» (օր. ա) նախակրթության մեջ նիորեն սխալմամբ դարձել է Տանտալոսի կինը: Այս առասպելի եղծման կապակցությամբ հիշատակվում են հեթանոսական աստվածուհի Լետոն (այոյժ սիրելի Լետոյայ դիւի¹⁹, մօրն Ապոլլոնի, ... և բարկացեալ աստուածուհին») և նրա զավակները՝ Ապոլլոնը և Արտեմիսը, քանի որ նրանք բուն առասպելի գործող անձինք են: Բացի սյդ, հիշատակվում են «վեհք»²⁰, իսկ այն միտքը, որ մարդկանց և աստվածների միջև բարեկամությունն անհնար է, փոխառություն է Աֆթոնիոսից: Վերջինիցս անկախ է վեհերին բարկացնելու հնարավորությունը «անհարմարական» համարելը, քանի որ նրանց «միշտ յանախտութեան անցեալ մնացին գոյացությունը»:

2. «Եղծ Կանտուղեայ» (օր. բ, հավանաբար անվան սկզբնական ձևը՝ Կանտուղեա կամ Կանդաղեա, հմմտ. հուն. Κανδαγα, աղավաղվել է ձեռագրերում՝ աւ>ու²¹) նախակրթության առաջին՝ «բամբասանք ասողին» գրված շերտողոտոսի գրելու եղանակը ստացել է «զձև շարագրի» անվանումը. այս արտահայտությունը ծագել է Աֆթոնիոսի մոտ հերոդոտոսի Ծաղրաբան (Շարձակագիր), ի հակադրություն Խուլիանի մակդրի աղվեցություն տակ:

3. Աֆթոնիոսի 'Αναστασιῦ ὁτι οὐκ εἰχότα τα κατὰ Μτῆδαιον նախակրթությունը նյութը քաղում է Եվրիպիդեսի «Մեդեա» ողբերգությունից, իսկ «Եղծ Վեդեայ» (օր. գ) նախակրթության մեջ եղծվում է Մեդեայի մասին սուտասպելի այն մասը, որը, հավանաբար, կազմել է Եվրիպիդեսի առաջին և չպահպանված՝ «Պելիադներ» ողբերգության սյուժեն²²: Ստացվում է, որ կարդալով Աֆթոնիոսի համապատասխան նախակրթությունը, մեր հեղինակը որոշել է գրել Մեդեայի եղծը, սակայն իր նյութը քաղել է Եվրիպիդեսի այն ողբերգությունից, որից չի օգտվել Աֆթոնիոսը:

4. «Հասարակ տեղի յաղագս շան» (օր. ա) նախակրթության հիմնական տարբերությունը Աֆթոնիոսից հետևյալն է. վերջինիս մոտ անառակի հասցրած վնասը հայրերի՝ իրենց զավակների իսկության մասին վստահության կորուստն է, և ընդհակառակը, իսկ հայերեն բնագրում նա մեղադրվում է անամոթության, խորամանկության, րնկերոջ անկողինը պղծելու համար, որի հետևանքներն էին «Պիտոյից գրքի» համար սովորական աղետները՝ ամուսինը

19 «Դե» բառի եղակի սեռականը:

20 «Եղծ զՆեոփրայ» (օր. գ) չպահպանված նախօրինակով նախակրթությունը նույնպես հեթանոսական աստծու՝ Հերակլեսի մասին է, և այնտեղ էլ հիշատակվում են «վեհք», որոնք սովորություն ունեն պատժել «զպոսկացեալս և... անօրինեալս»:

21 Աղբքսանդրի վարքում կա Կանդաղեա անունը՝ Պատմություն Աղբքսանդրի Մակեդոնացու, Վենետիկ, 1842, էջ 151:

22 Տե՛ս A. Baumgartner. Op. cit., S. 475:

դրկվեց սիրելի կնոջից, տունը կորցրեց իր բարի համբավը, ծերերն ու երեխաները «անտառ» մնացին, հասարակությունը վնաս է կրել, օրենքներն արհամարհված են:

5. «Հասարակ տեղի յաղագս ճարտասանի մատնչի» նախակրթության նախօրինակը Աֆթոնիոսի մոտ կրում է *χοινός τῶνος κατὰ ἁρεσῶτα* խորագիրը: Տեքստում նույնպես մատնչի ճարտասան լինելու մասին հիշատակություն չկա: Իսկ նախակրթությունից տեղեկանում ենք, որ զորավարներն ընտրվում են հմուտ ճարտասաններից: Աֆթոնիոսից չէ նաև նրան ամենասարսափելի մահով («դժնդակագունիս խզմամբ») պատժելու պահանջը, քանի որ հնարավոր չէ «բիւր մահու սպանանել»:

Վերոհիշյալ երկու «հասարակ տեղի»-ներում էլ շարագործը համեմատվում է գողի (երկրորդում՝ նաև դասալիքի), իսկ Աֆթոնիոսի մոտ՝ սրբապղծի և մարգասպանի հետ:

6. «Հասարակ տեղի յաղագս բժշկի, որ մահու դեղ տայ» (օր. բ) ծավալով ավելի համառոտ է, քան համապատասխան նախակրթությունը կիբանիոսի մոտ: Վերջինիս հետ կան հետևյալ ընդհանուր մտքերը. ոմն քաղաքացի առատ ընծաներ է պարգևում շարագործին և աղաչում է փոկել, իսկ նա չղթելով «արբույց փոխանակ կենդանականի զմահաշունչ դեղ... փոխանակ առողջական դեղոյ՝ հիւանդականօք վառեցաւ», հմմտ. կիբանիոսի մոտ. *τα δεινότερα τοῖς καλλίστοις ἀνέμειξε, τοῖς παῖσιν τε καὶ ἀπὸ λήντα, τοῖς βροχιῶσι τε καὶ ἐμῶντα, τοῖς ῥινορραϊκοῖς τε οὐαῖς ἐκίρυντα* («խառնեց լավագույնին սարսափելիին, փրկարարին՝ սպանիչը, օգնականին՝ թշնամականը, պաշտպանողին՝ կործանիչը»): Այդ դեղը կիբանիոսի մոտ սկսեց «ուտել» ներսը, իսկ հայերեն լեռնորում՝ հրի պես այրելով սպանեց: Այրու, որբերի հառաչանքների, «տանց ամալութեան» հիշատակությունը ավելի հավանական է, որ «Պիտոյից գրքի» համար ընդհանուր մոտիվ է, քան կիբանիոսի մոտ մահացածներին սղացող աղգականների հիշատակության աղղեցություն: Այն միտքը, որ շարագործին ոչնչացնելով կարելի է մաքուր «բժշկութեան ծառը», ոտպեսդի այն լինի «փարելի և ոչ փախելի», առձագանքում է կիբանիոսի այն մտքին, որ նա ոչ միայն իր զոհերին է վնասել, այլև շատ ուրիշներին, քանի որ զոպարտել է արվեստը, և մարդիկ ավելի անվտանգ են համարում հանձնվել հիվանդություններին, քան բժշկների ձեռքը... Քաղաքը բժշկից ավելի շատ է վախենում, քան հրդեհից: Կամ ժանտախտից: Եթե կիբանիոսի մոտ բժշկի շարագործության պատճառը նրա անսահման ընչասիրությունն է, սպա «Պիտոյից գրքում» նա նախանձում է «ընդ համատոհմիցս կենդանասէր բաղմամարդութիւն» և ցանկանում հնարավորին չափ նվազեցնել նրանց թիվը: կիբանիոսի մոտ նա շատ հիվանդների է սպանել թույնով, «Պիտոյից գրքում»՝ նաև «խեղդիւք և հեղձուցմամբ»:

7. «Ներբողեան ձիթենոյ» (օր. բ) նախակրթության մի շարք կարևոր մտքեր փոխառություն են Աֆթոնիոսից. ձիթենու գեղեցկության և չափավոր հասակի մասին, որ ըմբիշները մրցույթից առաջ օծվում են նրա յուղով, իսկ հաղթողը պարգևատրվում է նրա ճյուղով, որ նա նպաստում է իմաստությանը, քանի որ նրա յուղի լույսով մարդիկ կարողանում են «չիմաստնասիրականն ներակրթել վարժման»: Սակայն Աֆթոնիոսը չունի հետևյալ տեղեկությունները. ձիթենին չափավոր խնամք է պահանջում, ապրում է մյուս պրտղաբեր ծառերից ավելի երկար, իսկ մեռնելիս՝ որպես հիշատակ իր մասին նոր շատավիղներ է արձակում: Ձիթենին համեմատվում է արմավենու, իսկ Աֆթոնիոսի մոտ՝ որթի հետ: Այս տարբերությունը կարելի է բացատրել «Բաղդատութիւն ձիթենոյ և արմաւենոյ» նախակրթության առկայությամբ:

8. «Ներբողեան գարնանոյ» (օր. գ) նախակրթությունը բավական ինքնուրույն է իր համեմատաբար համառոտ, ինչպես ինքը Աֆթոնիոսն է խոստովանում, նախօրինակի համեմատությամբ: Ծավալուն «նախաշաւիդ»-ն ունի «Պիտոյից գրքի» համար անսպասելի՝ աստղագիտական և տիեզերաբանա-

կան հարցերի հետ առնչվող բովանդակություն: Այդ հատվածի երկրորդ մասը փոխառություն է դարձյալ Փիլոնի թարգմանությունից²³:

9. «Պարսաւ որթոյ» (օր. դ) ի տարբերություն Աֆթոնիոսի նախակրթության, որի կեսը կազմում է Դիոնիսոսի մասին առասպելը, իսկ վերջում դեցաբանությունից և պատմությունից արբեցողության հասցրած վնասի օրինակներ են բերվում, մանրամասնորեն մշակում է հրահանգով պահանջվող բոլոր գլուխները: Որոշ մտքեր մեր հեղինակը փոխ է առել Աֆթոնիոսից. որթի մշակման դժվարության, նրա տգեղ, «գետնանախանձ» հասակի մասին: Մեծ է հարցի բարոյական կողմին հատկացրած ուշադրությունը: Արբեցողության՝ ֆիզիոլոգիական առումով զգվելի արտահայտությունների նկարագրությունը կրում է Բարսեղ Կեսարացու «Հարբեցողաց» ձառի²⁴ ազդեցությունը: Աֆթոնիոսը բաղդատում է որթը ձիթենու՝ գեղեցիկ և ազնիվ բույսի հետ, իսկ մեր հեղինակը՝ անպետք, բայց ոչ այդքան վնասակար սեղեսնու և մորենու հետ:

10. «Պարսաւ նաւարկութեան» (օր. ե) նախակրթության մեջ Աֆթոնիոսից են ծագում նավաստիների կործանարար ընչասիրության (որ մղում է ներանց դեպի արդ վտանգավոր ձեռնարկությունը) և առանց թաղվելու մահվան մասին մտքերը: Ինքնուրույն են դատողություններն այն մասին, որ նավարկությունը սովորեցնում է սպանություն, գողություն, ավազակություն, զրկում է նավաստիներին իմաստություն ձեռք բերելու հնարավորությունից, սևացնում և արևակեղ է անում նրանց, նրանց ողջախոհությունը ակամա է, իսկ հարկեալն յայտ է. զի ոչ ողջախոհութիւն է», նրանք խարդախ են առևտրում և առելի են մարդկանց ինչպես ղեկերը: Նավարկությունը համեմատվում է «զինւորական» արվեստի, իսկ Աֆթոնիոսի մոտ՝ երկրագործության հետ: Ընդհանրապես «Պիտոյից գրքի» «պարսաւ»-ների «բաղդատութիւն»-ներն ավելի սրամիտ և տպավորիչ են, քան Աֆթոնիոսի մոտ, քանի որ շարիքը համեմատվում է դարձյալ շարի հետ և գերազանցում նրան, հետևաբար դառնում ամենաշարն իր դասի մեջ: «Նախաշաւիղ»-ներում նույնպես որթը անվանվում է ամենալուսավոր բույսը, իսկ նավարկությունը՝ ամենաշարը մարդկային գործերից: Նույնիսկ մեկ անգամ օգտագործված է «նաւաքարչութիւն» բառը:

11. «Բաղդատութիւն ձիթենոյ և արմաւենոյ» նախակրթության մեջ նախօրինակից անկախ տեղեկություններ են հաղորդվում այդ բույսերի խնամքի, արմավենու աբաբքին տեսքի, նրա պտղի կարծրության և համի, ձիթենու պտղի՝ մինչև հասունանալը դառնության, նրա փայտից կահույք, իսկ արմավենու փայտից՝ անոթներ պատրաստելու մասին: Հիշատակվում են Աստվածաշնչում նրանց վերաբերող տեղերը:

12. «Զինչպիսի բանս ասասցէ ի միջոցս երկրի բնականալ, առաջին դժով տեսեալ» բարառնությունն իր ծավալով երեք-չորս անգամ գերազանցում է Աֆթոնիոսի համապատասխան նախակրթությունը: Նրկուսում էլ առկա են անծանոթ և անհրապույր տեսարանից առաջացած դարմանքն ու վախը և ցումաքի գերադասությունը ծովից: Հայերեն բնագրում ծովը համեմատվում է գետերի և լճերի հետ:

13. «Պիտոյից գրքի» երեք «արտասանութիւն»-ների համապատասխանն ունենք Լիբանիոսի ժողովածուում: Նրեքում էլ առկա է տվյալ սեռակի համար բնորոշ հեղինակային «ես»-ը և նախակրթության վերջում բերվող այն միտքը, որ նա ցանկացել է իր տեսածից ստացած հաճույքը կիսել ունկնդիրների հետ:

«Արտասանութիւն որսոյ» (օր. ե) նախակրթության Լիբանիոսի հետ բնականորեն մտքերն հետևյալն են՝ օգույին, ջրային և ցամաքային որսի առևտրին:

²³ Փիլոնի Երբայեցոյ մնացորդը ի Հայս, աշխատասիրութեամբ Մկր. Ավգերեանցի. Վենետիկ, 1826. Այնուցիկ որ յիւն է խնդրոց և լուծմանց բան առաջին, էջ 443—445: Փիլոնի հայերեն թարգմանությունների ազդեցության այլ համոզիչ ապացույցներ էլ ունենք, սակայն այս հարցն առանձին ուսումնասիրության նյութ է: Հետաքրքիր է հետևությունը. պարզվում է, որ Փիլոնի գործերի թարգմանությունը «Պիտոյից գրքի» գրությունից վաղ է:

²⁴ Кавказ и Византия. Т. I, Ереван, 1979, с. 221—229.

րից գերադասելի է վերջինը, քանի որ բացի հնարամտությունից նաև ուժ է պահանջում։ Որսորդները ճանապարհ են ընկնում որսորդական սարքավորումով զինված։ Սկզբից պատրաստում են ամեն ինչը լուծյան մեջ, իսկ հետո հանկարծակի աղմուկ բարձրացնելով վախեցնում, շրջապատում և սպանում են զոհին։ Տարբերությունները հետևյալն են՝ հունարեն տեքստում որսորդները ճանապարհ են ընկնում լուսնի լույսով, իսկ հայերենում՝ արշալույսին։ Լիբանիոսից չէ այն միտքը, որ որսորդների խումբն իրենից գեղեցիկ տեսարան էր ներկայացնում։ Լիբանիոսի մոտ որսի ավարտից հետո զոհեր են մատուցում աստվածներին և իրենք էլ են հյուրասիրվում, իսկ մնացածը քաղաք տանում որպես «հաղթանակի» վկայություն։ Հայերեն նախակրթության մեջ ուրախությունն արտահայտվում է երգերով և պարերով։ Այնուհետև բաժանում են որսը, «գոհացողք լինելով զաստուծոյ»։ «Յաղթող քաջութին» և «յաղթանակ գովութեանց» արտահայտություններն առաջացել են, անշուշտ, հունարեն *νίκη*-ի ազդեցության տակ։

14. «Արտասանութիւն բուրաստանի» (օր. գ). Լիբանիոսի մոտ հիշատակվող այգիներով բախտավոր ֆեակաների փոխարեն հանդես է գալիս Ադամը, որի ամենամեծ երջանկությունը դրախտն էր։ Լիբանիոսի մոտ այգին գտնվում է ցածրադիր վայրում, ուր բազմաթիվ վտակներ են ներհոսում, «Պիտոյից գրքում»՝ հարթեցված, ուռգվող և արգավանդահող վայրում։ Լիբանիոսի մոտ ցանկապատը քարից է, «Պիտոյից գրքում»՝ փշոտ թփերից՝ կենդանիներին և չար մարդկանց վախեցնելու համար։ Նրան հաջորդում են ոչ մշակովի ծառերը, որոնք, ըստ հայ հեղինակի, շինանյութ են մատակարարում, իսկ Լիբանիոսի մոտ նրանց են փաթաթվել խաղողի որթերը։ Պտղատու ծառերից Լիբանիոսի թզենու և խնձորենու դիմաց հայերեն տեքստում հանդես են գալիս խնձորենին և նոնենին։ Օգտակար բանջարների և հոտավետ՝ ծաղիկների հիշատակությունը Լիբանիոսի մոտ չկա։ Այգում բազմաթիվ թռչուններ են երգում, որոնք Լիբանիոսի մոտ նաև իրենց «հրամցնում են» որսորդներին։ «Պիտոյից գրքի» վտակները նախօրինակ ունեն Լիբանիոսի մոտ, սակայն վերջինս այդ թեման չի կապում աշխատասեր երկրագործի ջանքերի հետ։

15. «Արտասանութիւն նաւահանգստի» (օր. է) առաջին կեսն ընդհանրություններ ունի Լիբանիոսի հետ՝ քաղաքների մի մասը ցամաքային են, մյուսները՝ ծովափնյա։ Նոջանիկ են վեոջիններս։ Նավահանգիստները լինում են բնական և մարդու ձեռքով ստեղծված։ Նկարագրվում է առաջին տեսակը. ցամաքի երկու հատված ծովն են խրվում՝ կամար (հունարենում *καμάρι*՝ «շրթան») կազմելով, միայն նավերի ելումուտի համար սեղ (հունարենում *στέγα*՝ «բերան») թողնելով։ Նավերի մի մասը խարսխված են, մյուսները պատրաստվում են ծով դուրս գալու։ Մարդիկ աղոթում են Պոսեյդոնին (հմպ. աստծուն). ոմանք շնորհակալություն են հայտնում ճանապարհորդության հաջող ավարտի համար, մյուսները՝ փրկություն խնդրում ապագայի համար։ Լիբանիոսի մոտ հիշատակվող հանգստի համար նախատեսված սյունաշարերի փոխարեն հայերեն նախակրթության երկրորդ կեսը նվիրված է նավահանգստի շքեղ շինության նկարագրությանը։ Սրահները զարդարված են նկարներով և ծովի ու ցամաքի բարիքները պատկերող հախճապակյա (ըստ երևույթին խճանկար) հատակներով, լի են պատվական մարդկանցով, որոնցից ոմանք թագավորական մաքս են գանձում, մյուսները զբաղված են առևտրով և այլն...²⁵։

16. Չնայած «գրութեան» հրահանգը գլուխների մանրամասն բաժանում չի պահանջում, սակայն երեք «գրութիւն»-ներում էլ մեր հեղինակը, հետևելով Աֆթոնիոսին, որպես հօգուտ քննարկվող առարկաների բերվող կետեր,

²⁵ Այն հանգամանքը, որ վերոհիշյալ երեք «արտասանութիւն»-ների բովանդակությունը բավական մոտ է Լիբանիոսի բնագրին, չի համապատասխանում մեր այն հայտարարությանը, որ հայերեն նախակրթությունները հեռու են Լիբանիոսից (էջ 7)։ Սակայն դեռևս առանց բացատրության թողնելու այս փաստը, գտնում ենք, որ այն չի հակասում «Պիտոյից գրքի» և Լիբանիոսի նախակրթությունների միջև Աֆթոնիոսի շատ հպանված միջանկյալ օղակի մասին մեր վարկածին։

մշակում է «ներբողեան»-ից փոխառյալ «անձն» բաժինը կազմող «իմաստութիւն», «ողջախոհութիւն», «արութիւն» և «արդարութիւն» գլուխները (հետաքրքիր է, որ Աֆթոնիոսը բաց է թողնում դրանք իր «ներբողեան»-ներում և կիրառում է «գրութիւն»-ներում):

17. «Դրութիւն, եթէ ամուսնանալի՞ իցէ» նախակրթությունը Աֆթոնիոսի հետ շատ ընդհանուր մոտիվներ ունի. ամուսնությունը «մանկասերության» շնորհիվ դիմագրում է մահվանը, ծնում է արություն՝ ստիպելով պայքարել կնոջ և զավակների համար, իմաստություն՝ դրդելով հոգալ սերունդների մասին: Ողջախոհության թեման այլ կերպ է հանդես գալիս: Պաշտպանելով այն թեզը, որ մարդկային գործերից և ոչ մեկը վտանգից զերծ չէ, մեր հեղինակը, ինչպես և Աֆթոնիոսը, թվարկում է նավարկությունը, երկրագործությունը, զինվորությունը, սակայն վտանգների բնութագիրը փոքր-ինչ տարբեր է հունարենից:

18. Եթե համեմատենք «Եթէ նաւելի՞ է» դրության և «Պարսաւ նաւարկութեան» նախակրթության մեջ «անձն» բաժնի գլուխները, ուր դրանք հակառակ Նշանով են հանգես գալիս, կտեսնենք, որ նրանցում միմյանց հակասող, հակադարձ մտքեր են արտահայտվում:

	«Պարսաւ նաւարկութեան»	Դրութիւն «Եթէ նաւելի՞ է»
իմաստութիւն	Ինչպէ՞ս կարող են իմաստություն ձեռք բերել նավաստիները, «որք ոչ ի դրպրոցս իմաստասիրաց դեզերին», տեսնում են միայն երկինքն ու ցուրը:	Նավարկությունն ավելի է նպաստում իմաստությանը, քան իմաստասերների «պարք», որ «...յիմաստութեանն դեզերին դպրոցս»: Նավաստիները գիտեն արևի և աստղերի շարժումը:
ողջախոհութիւն	Հարկադրված ողջախոհությունը իսկական չէ:	Ողջախոհ են, քանի որ հեռու են նույնիսկ հարազատ ամուսիններից:
արութիւն	Անընդհատ վախը զրկում է նրանց արությունից:	Նավարկությունը արություն է սերմանում, պահելով նավաստիներին օդի և ջրի տարերքի միջև:
արդարութիւն	Խաղախ են առևտրում:	Արդար են, քանի որ զգուշանալով վրտանգից՝ բարերանում են աստծուն:

Միայն «արդարութիւն» գլխի պատճառաբանությունները չեն համընկնում:

Նշված երևույթը չի խախտում նախակրթությունների ժանրի օրենքները, երբ նման հակասությունները ոչ միայն ամբաստանելի չեն, այլ ընդհակառակը՝ ցանկալի են: Հմմտ. օրինակ, Լիբանիոսի մոտ՝ Ἀναγκαῖον ὅτι οὐκ εἰκότα τὰ κατὰ Λίαντα τὸν Ἀόχρον. Καταγκαῖον ὅτι εἰκότα τὰ κατὰ Λίαντα τὸν Ἀόχρον. (միևնույն առասպելի «եղծումը» և «ստեղծումն» է):

19. Հ. Տաշյանը²⁶, հերքելով իրենից առաջ ընդունված այն կարծիքը, թե «պէտք» (օր. և) վեոնագիրը՝ «գթնանով ոմն պիթագորական և հարց, և թէ յետքանի՞ աուր կնոջ առ այր մերձաւորութեան արժան է մտանել ի տէրունիսն: Իւ նա ասէ, յիւրմէն՝ նոյն օրին, յօտարէն՝ և ոչ բնաւ երբէք»²⁷ ծագում է Թեոնի նախակրթություններից (այդ նախադասության բառացի թարգմանությունն

²⁶ Մատենագիտական մանր ուսումնասիրութիւնք, հետադասութիւնք և բնագիրք. Վիեննա, 1895, էջ 217–218:

²⁷ Գտնելով այս հատվածի այնպիսի այլափոխությունը Սերևոսի մոտ, որն ակնհայտ է դարձնում «Պիտոյից գործից» փոխառված լինելը և հունարենից (Թեոնից) ինքնուրույն թարգմանության անհնարինությունը. Ս. Բաումգարտները եզրակացնում է, որ «Պիտոյից գիրքը» զրկված է Սերևոսից առաջ. տե՛ս վերը՝ ծան. 3:

առկա է նրա հայերեն տարբերակում), նրա համար այլ աղբյուր է գտնում՝ «Բանք իմաստասիրաց» ժողովածուի հետևյալ հատվածը. «զԹէոմնաս ոմն կին պիթագորական հարցեալ թէ յետ քանի՞ աւուր մտցէ ի տուն կոոց այր որ լինի ընդ կնոջ, ասէ. յիրն՝ նոյն աւրին, և յատարին՝ ոչ բնաւ» (ԺԸ, 18): Տաշ-յանը հավանաբար ելնում էր այն հանգամանքից, որ զԹէանով և զԹէոմնաս բառերը հայցական հոլովով են, իսկ Թեոնի մոտ՝ Θεωνο ուղղական հոլով է, Πυθαγόρας γ' ο φιλόσοφος-ն էլ՝ նրա որոշիչն է: Սակայն այս նախակրթությունը բացառություն չէ մյուսների շարքում, նրա նախօրինակը կարելի է գտնել Աֆթոնիոսի մոտ և անհրաժեշտություն չկա այն փնտրել Թեոնի մոտ. Աֆթոնիոսի մոտ անունը նույնպես ուղղական հոլովով է, և այդ պատճառով մեր նախակրթության վերնագրում հայցական հոլովը աղավաղում ենք համարում, մանավանդ որ նույն միտքը կրկնվում է ստորև («պէտք» գլխում), որից պարզ է դառնում, որ մեր հեղինակը ճիշտ է հասկացել Աֆթոնիոսի տեքստը. «...սող ոմն՝ մեծադոյն նորա (Պյութագորասի) եղեալ իմաստիցն, կին՝ անուն Թէանով, որ հարցեալ լինէր...»: Աւտմն՝ զԹէոմնաս ձևի հայցական հոլովն է ծագում զԹէանով ձևից և ոչ ընդհակառակը, իսկ անունն աղավաղված է:

* * *

Տեղի սահմանափակության պատճառով մենք հնարավորություն չունենք բերել «Պիտոյից գրքի» նախակրթությունների բոլոր տարբերություններն իրենց նախօրինակներից, այլ մատնանշեցինք միայն առավել ցայտուն և հետաքրքրական տեղերը:

Տարբերությունների մի խումբ բացատրվում է այն հանգամանքով, որ հեղինակն օգտվել է նաև հայ գրականությունից, որի ազդեցությունը, ինչքանով առկա նյութը թույլ է տալիս դատել, հիմնականում ոճական բնույթ էր կրում: Հետևելով խաթայիցին, որը խորենացու աղբյուրները բաժանում է հիմնական և երկրորդական խմբերի²⁸, «Պիտոյից գրքի» նախակրթությունների հիմնական աղբյուր կարող ենք համարել Աֆթոնիոսի նախակրթությունները, իսկ երկրորդական՝ Փիլոնի թարգմանությունը և մի շարք այլ թարգմանական երկեր: Նախակրթությունների գրության պատկերը վերջնականապես կպարզվի միայն նրանց բոլոր հնարավոր աղբյուրների բացահայտումից հետո: Սակայն այժմ էլ հնարավոր է նկատել հեղինակի ինքնուրույնության մի քանի անկասկած արտահայտություն: Ինքնուրույն է հեղինակի ձգտումը խնդրոն հետևել հրահանգներին, որից էլ բխում են մի շարք ձևական տարբերություններ նախօրինակից: Հական տարբերությունները հիմնականում բացատրվում են այն հանգամանքով, որ մեր հեղինակը քրիստոնյա է, իսկ Աստվածաշունչը՝ նրա ամենամեծ հեղինակությունը, որը, սակայն, դիտվում է նաև որպես գրական երկ և հաջողությամբ նյութ մատակարարում ճարտասանական վարժությունների համար այնպիսի երկերի կողքին, ինչպիսիք են Հոմերոսի «Իլիականը», Եվրիպիդեսի ողբերգությունը, Մենանդրոսի կատակերգությունը և այլն: Ճիշտ է, Աստվածաշունչը, ավելի հեղինակավոր լինելով, վկայակոչվում է նրանց մտքերը հաստատելու համար:

Սակայն քրիստոնեացնելով իր նյութը, «Պիտոյից գրքի» հեղինակը այն չի հայացնում այնպիսի միջոցներով, որոնց կիրառման դեպքեր կարող ենք գտնել «Պիտոյից գրքից» ավելի վաղ դրված թարգմանական երկերում արդեն. Օրինակ, Դիոնիսիոս Թրակացու թարգմանության մեջ հաճախ քերականական նյութը լուսաբանող օրինակները սկզբնաղբյուրից տարբեր են. մասնավորապես դասական հունական գրականության հետ առնչվող հատուկ անունների փոխարեն հայտնվում են աստվածաշնչական կամ էլ զուտ հայկական անուններ: Օրինակ, որպես «հայրանունական անուն» բերվող Πε'ε'ι'δης Α'ι'α'ι'δης ὁ Ἀ'λ'ι'ε'ος-ի դիմաց կարդում ենք «Համադասպեան Սանուէղ»²⁹, իսկ որպես

²⁸ Армянские Аршакиды..., ч. I, М., 1903, с. 327—373.

²⁹ Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915, с. 13.

«հոմանուն» բերվող Αἴας ὁ Τελαιωνιος καὶ Αἴας ὁ Δεως-ի դիմաց կարդում ենք «Յովհաննէս Չաքադեան և Յովհաննէս Չեբեղեան» (էջ 19):

Փիլոնի «Յաղագս տասն բանից» ճառի թարգմանության մեջ հունարենը բնագրի 'Εγρας, 'Αποδείξις, Διοκρισις³⁰ աստվածների անունները «թարգմանված» են «Վահագն», «Աստղիկ» և «Արամազդայ մանկունք»³¹:

Եթե «Պիտոյից գրքում» հալածման երևույթը առկա է, ապա այն պետք է փնտրել բովանդակության ավելի խոր շերտերում:

«КНИГА ХРИЙ» И ЕЕ ГРЕЧЕСКИЙ АРХЕТИП

Г. С. МУРАДЯН

Резюме

Приписываемая Моисею Хоренаци «Книга хрий» написана на основе первоначального полного сборника Афтония, включавшего теоретические наставления, прогимназмы, сохранившиеся в его кратком сборнике, и прогимназмы, дошедшие до нас под именем Николая Мирского. Наставления «Книги хрий» — перевод наставлений Афтония. Около половины прогимназм имеют архетипы у Афтония, однако являются не переводом, а подражанием, и содержат как заимствованные мысли, так и немалую долю самостоятельных. Большая часть прогимназм, не имеющих архетипов (они преобладают в конце книги), написана на библейские темы. В имеющих архетипы прогимназмах, даже трактующих античные сюжеты, материал христианизирован, однако признаков арменизации мы не заметили. Наличие армянских прогимназм заставляет сделать предположение о существовании десяти несохранившихся прогимназм Афтония, пять из которых были написаны в подражание Тибанию Антиохийскому.

³⁰ Philo. I—X. De decalogo, with an English Translation by F. H. Colson. M. A., v. VII, London, 1968, pp. 32—34.

³¹ Փիլոնի շերտայեցույ ճառը, թարգմանեսու ի նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրը հասին առ մեզ. Վենետիկ, 1892, էջ 237: